

BOOST ծրագրի կոորդինացիոն հանդիպում և «Միջազգայնացումը ազգային մակարդակում» թեմայով ազգային բաց համաժողով

2017թ.-ի նոյեմբերի 20-21-ը Հայաստանի Ամերիկյան համալսարանում տեղի ունեցավ BOOST ծրագրի կոորդինացիոն հանդիպումը, ինչպես նաև «Միջազգայնացումը ազգային մակարդակում» թեմայով ազգային բաց համաժողովը:

Կոորդինացիոն հանդիպմանը մասնակցում էին ծրագրի ՀՀ գործընկերները՝ Մանկավարժական, Հայաստանի Ամերիկյան, Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանից, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանից, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայից, ՀՀ ԿԳ նախարարությունից, Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնից, ինչպես նաև ԵՄ գործընկեր համալսարանների ներկայացուցիչները՝ Իսպանիայից, Էստոնիայից, Շվեդիայից և Պորտուգալիայից:

Հանդիպման ընթացքում ՀՊՄՀ-ի Միջազգային համագործակցության բաժնի ղեկավար Քրիստինա Ծատուրյանը ներկայացրեց ծրագրի ձեռքբերումները, հետագա ընթացքը, միջազգայնացման ազգային ռազմավարության նախագիծը:

Անդրադարձ կատարվեց նաև միջազգայնացման ազգային հարթակի ստեղծմանն ու գործող օրենսդրական կարգավորող շրջանակին:

«Միջազգայնացումը ազգային մակարդակում» թեմայով համաժողովին բացման խոսքով հանդես եկան ՀՀ կրթության և գիտության փոխնախարար Վահրամ Մկրտչյանը, Հայաստանի Ամերիկյան համալսարանի փոխնախագահ Ռանդոլ Ռոդեսը, ՀՊՄՀ-ի աշխատակազմի և միջազգայնացման գծով պրոռեկտոր Արա Երեմյանը, ինչպես նաև Հայաստանում «Էրազմուս+» ծրագրի ազգային գրասենյակի համակարգող Լանա Կառլովան:

Իսպանիայի, Պորտուգալիայի, Էստոնիայի և Շվեդիայի գործընկեր համալսարանների ներկայացուցիչներն անդրադարձան իրենց երկրներում միջազգայնացման ռազմավարությանը:

Համաժողովի երկրորդ հատվածում մասնակիցները բաժանվեցին խմբերի և ֆասիլիտատորների օգնությամբ համաշխարհային կաֆե մեթոդով (World Cafe Method) քննարկեցին միջազգայնացման ռազմավարությանը վերաբերող հարցեր:

[Coordination meeting agenda](#)

[Open Conference agenda](#)

[Minutes](#)





